դրամս պահապանաց եմուտ առ նա, և որպէս ինքն պատմէ, ետես զի նստեալ նորա առ հրով շղթայ յոտս՝ փոխանակ ջերմանալոյ դողայր յերկիւղէ մահու. և 'ի տեսանելն զերեմեա՝ ելաց և լացոյց զնա, զի բարձեալ էր 'ի յուսոյ կենաց. ետ ապա 'ի ձեռս նորա ծրար մի 500 ոսկւոյ, և զկնիքս իւր զմեծ և զփոքր։ Եւ նորա յոյս տուեալ եղիազարու և մխիթարեալ զնա՝ ել և գնաց անտի, և տարեալ զաւանդն՝ ետ 'ի ձեռս Ռուհիջանին, որ էր գործակալ Պատրիարքին Երուսաղէմի։

Մնաց Եղիազար յերկաթս զաւուրս 34. եւ բարեկամք նորա երթային և գային 'ի դրունս իշխանաց ծանր ընծայիւք, մինչեւ ճանձրանալ նոցա և ասել, մի՞թէ կարեմք իշխել կամաց Եպարքոսին. համբերեցէք սակաւ մի, և մեք գտցուք ելս իրացդ։ Ապա նոքին խսկ իշխանք այլազգեաց յաղաչանս անկեալ հայցէին բազում անգամ յեպարքոսէն՝ կատարել զխնդիրս Հայոց և հանել զեղիազար, միանգամայն դարձուցանել 'ի նոսա և զՍ. Յակոբ որ յերուսաղէմ։

Այլ նա ոչ լուաւ, և 'ի թախանձել նոցա բազմօք, յանձնեաց զիրան մեծի իշխանին, որ երկրորդ իւր էր (Վէզիր Բիահէասի). և զի Յոյնք որսացեալ էին զնա 'ի կամս իւրեանց՝ 'ի դիմել Հայոց առ նա՝ մերժեաց զնոսա յիւրմէ։ Գնացին ապա Հայք հանդերձ Մարտիրոս վարդապետիւ 'ի տեղին ուր կայր Եղիազար 'ի կապանս, և 'ի խօսիլ նոցա ընդ նմա վասն ազատութեան անձին նորա և վասն Ս. Յակոբայ, ասէ ցնոսա Եղիազար. վասն իմ մի ինչ հոգայք, այլ հոգ ձեր լիցի վասն Ս. Յակոբայ, զի մինչեւ ոչ ազատեսցի այն, ես ոչ կամիմ ելանել աստի։ Եւ ապա դրեաց թուղթ առ Մարտիրոս վարդապետ՝ և ասէ՝ որ ոք կամեցի հանել զիս աստի առանց կամելոյ հոգ տանիլ ազատութեան Ս. Յակոբայ, նզովեսցի յԱստուծոյ։ Այլ Մարտիրոս վարդապետ ոչ մատուցեալ ունկն բանից նորա, խորհուրդ արար ընդ Հայս, և գնացեալ նոքօք հանդերձ վերստին առ մեծամեծս այլազգեաց, աղաչէր զնոսա, մանաւանդ զհաղարապետն զՍիւլէյման Պէյ, միւսանգամ միջնորդել գոնէ վասն ազատութեան Եղիազարու. եւ նոքա հազիւ ուրեմն հաճեցուցեալ զկամս Եպարքոսին առանց իրիք տուդանաց ետուն արձակել զեղիազար, զոր առեալ Հայոց